

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման
վարչության «03» հունիսի 2005թ.

N 82-Ա հրամանով

Յ. Զ. Զեյնալ

Տպագրված է ընդամենը 5 օրինակից
ՕՐԻՆԱԿ 3
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐՈՒՄ
ԳՐԱՆՑՄԱՆ N28621004494
ՎԿԱՅԱԿԱՆ N03Ա053311 *28.02.05*

Թիվ 03.2
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ
«15» 07 2005թ.

Պետական Ռեգիստրի Նոր-Նորքի
տարածքային բաժնում
07 2005թ.

Տարածքային բաժնի պետ *[Signature]* Ա. Վարդանյան
07 2005թ.



«ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է պետական գույքի օտարման և մասնավորեցման (վաճառքի) կազմակերպման և իրականացման, ինչպես նաև մասնավորեցման գործընթացին աջակցելու նպատակով:

1.2. Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 29-ի «Աճուրդի կենտրոն» պետական հիմնարկը «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» N72 որոշմամբ՝ «Աճուրդի կենտրոն» պետական հիմնարկը «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու միջոցով և համարվում է «Աճուրդի կենտրոն» պետական հիմնարկի իրավահաջորդը:

1.3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ օրենք), օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կազմակերպությունը ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

1.7. Կազմակերպության կառավարման լիազորությունները հիմնադրի որոշմամբ վերապահված են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը (այսուհետև՝ լիազորված պետական մարմին):

1.8. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է լինել միայն հիմնադրի որոշմամբ:

1.9. Կազմակերպության լրիվ անվանումը և գտնվելու վայրը՝ հայերեն՝ «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նորքի I զանգված, 95/96 շենք (Գայի 4)

ռուսերեն՝ Государственная некоммерческая организация "Аукционный центр"
адрес-Республика Армения 375, г. Ереван, I Норкский массив, дом 95/96 (ул. Гая 4)
անգլերեն՝ "Auction center" State not Commercial company
address. Republic of Armenia 375, Yerevan, 95/96 Building (Gayi 4), Nork 1-st. District:

